


Փաստ. անվանումը	ԵՄՀ օգնությունների տրամադրման կարգ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԿԳ-23-01
Հաստատման ամսաթիվը	02/11/2009
Արձանագրության N	
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ
Հաստատող	Սուրեն Օհանյան/Նախագահ

Փաստաթղթի փոփոխությունները

Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն, Ստորագրություն
12/12/2014	Կարգը փոխվել է մասնակիորեն	Սուրեն Օհանյան/Նախագահ
09/02/2015	Կարգը փոխվել է մասնակիորեն	



ԿԱՐԳ

ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Եվրասիա միջազգային համալսարանի ուսանողի օգնության տրամադրման կարգը սահմանվում է Եվրասիա միջազգային համալսարանի կանոնադրությամբ և սույն կարգով:
2. Ուսանողական ֆինանսական օգնությունը՝ Եվրասիա միջազգային համալսարանի բյուջեի ծախսային մասում նախատեսված ֆինանսական միջոցների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին ուսանողական կրթաթոշակների տրամադրումն է: Ուսանողական կրթաթոշակը ֆինանսական օժանդակություն է բարձր ՄՈԳ ունեցող, գերազանց և լավ առաջադիմություն ցուցաբերած, պատշաճ վարքագիծ դրսևորած ուսանողներին՝ ֆինանսական խրախուսանքի ձևով:
3. Ըստ մասնագիտությունների՝ Համալսարանի կողմից հատկացված ուսանողական ֆինանսական օգնությունների քանակը փոփոխական է և կախված է բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողների ընդհանուր թվից:
4. Առաջին կուրսի ուսանողները, ֆինանսական օգնության իրավունքից կարող են օգտվել միայն ուսումնառության 2-րդ կիսամյակից: Ըստ առաջադիմության միջին ցուցանիշի՝ ձևավորվում է տվյալ կուրսի տվյալ մասնագիտության ուսանողների ցուցակը:
5. Ցուցակը ֆակուլտետի դեկանի կողմից ներկայացվում է ուսումնական մաս: Ուսումնական մասը, ամբողջացնում է բոլոր մասնագիտությունների ուսանողների ցուցակը, ըստ առաջադիմության, և իրականացնում է մրցույթ: Մրցույթի արդյունքների հիման վրա կազմվում է կրթաթոշակից օգտվող ուսանողների ցուցակը, որը պարտադիր վավերացվում է պրոռեկտորի կողմից:
6. Համալսարանի ուսումնական մասի կողմից հաստատված ցուցակները հրամանագրվում են Եվրասիա միջազգային համալսարանի ռեկտորի կողմից և տեղեկացվում ուսանողներին հրապարակման ճանապարհով (փակցվում է ֆինանսական օգնության տրամադրման համար նախատեսված ցուցատախտակին): Հրամանում պարտադիր նշվում է կրթաթոշակի տրման ժամկետը՝ աշնանային

կիսամյակի համար տվյալ տարվա սեպտեմբերի 1-ից մինչև հաջորդ տարվա հունվարի 31-ը և գարնանային կիսամյակի համար փետրվարի 1-ից մինչև հունիսի 31-ը: Ցուցակների վերաբերյալ բողոք-դիմումները կարող են ներկայացվել համալսարանի ուսումնական մաս ցուցակների հրապարակումից հետո՝ եռօրյա ժամկետում:

7. Ցուցակներում անճշտություններ, վրիպումներ, սխալներ, ինչպես նաև ցուցակների կազմման ընթացակարգի այլ խախտումներ հայտնաբերելիս համալսարանի ռեկտորը իրավասու է տվյալ մասնագիտության ուսանողների ցուցակը հետ վերադարձնել տվյալ ֆակուլտետ՝ նոր մրցույթի կազմակերպման պահանջով:
8. Եվրասիա միջազգային համալսարանն սահմանում է հետևյալ կրթաթոշակները:
 - 8.1. «Օհանյան» կրթաթոշակ,
 - 8.2. «Եվրասիա» կրթաթոշակ,
 - 8.3. Դասավանդման կրթաթոշակ,
 - 8.4. Հետազոտական կրթաթոշակ:

8.1.1. «Օհանյան» կրթաթոշակը տրվում է ուսանողների 5%-ին, որոնք ունեն ամենաբարձր ՄՈԳ-ը: Այս կրթաթոշակը կազմում է ուսանողների մեկ կիսամյակի վարձի 10-100%-ը:

8.1.2. Բակալավրատուրայի ուսանողներին, ովքեր շահում են այս կրթաթոշակը, առաջարկվում է աշխատել ԵՄՀ-ում շաբաթական 1-10 ժամ, մագիստրատուրայի ուսանողներին՝ շաբաթական 2-20 ժամ: ԵՄՀ-ի բոլոր ուսանողներն իրավունք ունեն շահել այս կրթաթոշակը: Նրանք գնահատվում են ըստ ՄՈԳ-ի:

Կրթաթոշակի չափը, պարգևատրվող ուսանողների թիվը և նրանց համար սահմանված աշխատանքի տևողությունը՝

Կրթաթոշակի կարգը	Կրթաթոշակի չափը՝ ըստ ուսման վարձի	Պարգևատրվում է ուսանողների թվի	Աշխատանքի տևողությունը /շաբաթվա կտրվածքով/	
			բակալավրատուրա	մագիստրատուրա
I	100%-ը	ամենաշատը 0,5%-ը	10 ժամ	20 ժամ
II	90%-ը	հաջորդ 0,5%-ը	9 ժամ	18 ժամ
III	80%-ը	հաջորդ 0,5%-ը	8 ժամ	16 ժամ
IV	70%-ը	հաջորդ 0,5%-ը	7 ժամ	14 ժամ
V	60%-ը	հաջորդ 0,5%-ը	6 ժամ	12 ժամ

VI	50%-ը	հաջորդ 0,5%-ը	5 ժամ	10 ժամ
VII	40%-ը	հաջորդ 0,5%-ը	4 ժամ	8 ժամ
VIII	30%-ը	հաջորդ 0,5%-ը	3 ժամ	6 ժամ
IX	20%-ը	հաջորդ 0,5%-ը	2 ժամ	4 ժամ
X	10%-ը	հաջորդ 0,5%-ը	1 ժամ	2 ժամ

«Օհանյան» կրթաթոշակի մասին որոշումները հայտարարվում են յուրաքանչյուր կիսամյակի սկզբում և ուժի մեջ են մինչև այդ կիսամյակի ավարտը:

8.2.1. «Եվրասիա» կրթաթոշակը տրվում է մագիստրատուրայի ուսանողներին, ովքեր ուսումնառության ընթացքում մասնակցել են գիտաժողովների և ունեցել են հրապարակումներ Եվրասիա միջազգային համալսարանի պարբերականում կամ ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում: Կրթաթոշակը կազմում է մեկ կիսամյակի ուսման վարձի 10-50%-ը: Այն հատկացվում է ուսանողների 3%-ին:

8.2.2. Մագիստրատուրայի ուսանողներին, որոնք շահում են այս կրթաթոշակը, առաջարկվում է աշխատել ԵՄՀ-ում շաբաթական 2-20 ժամ: Կրթաթոշակի չափը, պարգևատրվող ուսանողների թիվը և նրանց համար սահմանված աշխատանքի տևողությունը՝

Կրթաթոշակի կարգը	Կրթաթոշակի չափը՝ ըստ ուսման վարձի	Պարգևատրվում է ուսանողների թվի	Աշխատանքի տևողությունը /շաբաթվա կտրվածքով/	
				մագիստրատուրա
I	50%-ը	հաջորդ 0,5%-ը		10 ժամ
II	40%-ը	հաջորդ 0,5%-ը		8 ժամ
III	30%-ը	հաջորդ 0,5%-ը		6 ժամ
IV	20%-ը	հաջորդ 0,5%-ը		4 ժամ
V	10%-ը	հաջորդ 0,5%-ը		2 ժամ

8.2.3. «Եվրասիա» կրթաթոշակի մասին որոշումները հայտարարվում են յուրաքանչյուր կիսամյակի սկզբում և ուժի մեջ են մնում մինչև դրա ավարտը:

8.3.1. «Ղասափանդման» կրթաթոշակ՝ հատկացվում է ուսանողին որպես դասախոսի օգնական ներգրավելով դասափանդման ընթացակարգի մեջ: «Ղասափանդման»

կրթաթոշակը չի տրվում այն ուսանողներին, ովքեր շահել են «Հետազոտության», «Եվրասիա» կամ «Օհանյան» կրթաթոշակները:

8.4.1. «Հետազոտության» կրթաթոշակը շնորհվում է Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի կողմից: Այն տրվում է այն ուսանողներին, ովքեր ցուցաբերել են գիտահետազոտական աշխատանքներ կատարելու մեջ հմտություններ ու կարողություններ և պատրաստվում են մասնակցել Համալսարանի հետազոտական ծրագրերի շրջանակներում կատարվող աշխատանքներին: Կրթաթոշակը տրամադրվում է ուսանողին՝ հետազոտական ծրագրի ժամանակահատվածում ուսման վարձի 5%-ի չափով: Կրթաթոշակի արժանացած ուսանողները ստանում են նախապատվություն միջազգային փոխանակման ծրագրերին մասնակցելու համար: Այն չի կարող տրվել ուսանողներին, որոնք շահել են վերը նշված կրթաթոշակներից որևէ մեկը: Հետազոտության արդյունքում ստացվելիք կրթաթոշակի մասին տեղեկությունները հաղորդվում են յուրաքանչյուր կիսամյակի սկզբում, և պայմանագիր է ստորագրվում հետազոտողի ու ուսանողի միջև:

9. Ուսանողների պատշաճ վարքագիծը դրսևորվում է նրանց կողմից համալսարանի ներքին կարգապահական կանոնները խստիվ պահպանելու մեջ, և նշված կանոնների խախտման համար ռեկտորի, պրոռեկտորի կամ ֆակուլտետների դեկանների կողմից տրված նկատողության հրամանները կարող են հիմք ծառայել կրթաթոշակ չհատկացնելու համար: